

## Ժաննա Անդրեասյան

Սոցիոլոգ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու

Ծնվել է 1981 թվականի փետրվարի 14-ին

2003 թվականից ընդգրկված է «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ում կրթական բարեփոխումներին ուղղված մի շարք ծրագրերի իրականացման գործընթացում: 2017 թվականից «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի ծրագրերի ղեկավարն է:

2004 թվականից դասավանդում է Երևանի պետական համալսարանում: Դասավանդման փորձառությունը ներառում է նաև համագործակցություն մի շարք գիտակրթական հաստատությունների հետ, ինչպես Ժամանակակից արվեստի ինստիտուտը, «Ուտոպիանա.ամ» մշակութային-ստեղծագործական հասարակական կազմակերպությունը, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը և այլն: Համագործակցության շրջանակը ներառել է նաև Բուն TV գիտակրթական առցանց հեռուստատեսության հետ սոցիոլոգիայի պատմության տեսադասախոսությունների շարքի պատրաստումը:

2013 թվականից ներառված է «Սոցիոսկոպ հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն» հասարակական կազմակերպության հետազոտական ծրագրերում:

Զբաղվում է սոցիալական փոխակերպման գործընթացների ուսումնասիրությամբ: Գիտական հետազոտությունների շրջագիծն ընդգրկում է նաև սոցիոլոգիական մեթոդաբանության համապատասխանության և սոցիալական ցանցերի որակական բնութագրիչների ուսումնասիրությունները: Մի շարք հրապարակումների հեղինակ է:

2016 թվականից Սոցիոլոգիայի միջազգային ընկերակցության անդամ է, այդ թվում հանդիսանում է Պատմահամեմատական սոցիոլոգիայի աշխատանքային խմբի և Սոցիալական շարժումներ, կոլեկտիվ գործողություն և սոցիալական փոփոխություն հետազոտական կոմիտեի անդամ: